ՀԱԿՈԲ ՊԱՐՈՆՅԱՆԻ ԱՇԽԱՏԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ «ԱՍԻԱ» ԹԵՐԹԻՆ

Ա. Ա. ՆԱՌԱՏՅԱՆ

Կ. Պոլսում հրատարակվող «Ասիա» թերթի խմբագրությունը Մ. Փորթուգալյանը ստանձնել է 1873 թ. դեկտեմբերի 1-ից՝ փոխարինելով Հ. Խանճյանին։ Նրա խմբագրության ժամանակ «Ասիան» ստացավ առաջադիմական-դեմոկրատական ուղղություն[1], որն արտահայտվեց ազգային լուսավորության ընդարձակ ծրագրի, հետադիմության քննադատության և Արևմտահայաստանի բնակչության հարստահարված վիճակի բացահայտման մեջ։ Իր դիրքորոշումը թերթը հանդես էր բերում նաև ազատությունը ներբողող բանաստեղծություններում («Վտարանդին», «Արտասուք կուսին», «Ցավք իմ», «Հրեշտակ բանբեր Հայաստանյայց» և այլն)[2], որոնք անստորագիր են, սակայն, կարծում ենք, մատնում են Մ. Փորթուգալյանի հեղինակությունը։ Դրանց մեջ նկատելի է Մ. Նալբանդյանի գաղափարական ազդեցությունը։

Մ. Փորթուգալյանը քանիցս ընդգծել է իր խմբագրած պարբերականի ժողովրդական ուղղությունը և սոցիալ-տնտեսական ու հասարակական կյանքի արատների դեմ պայքարի պատրաստակամությունը։ Ընդ որում, այստեղ ևս ակնառու է «Երկու տողի» ազդեցությունը։ «Հարուստներն ու հարստահարիչները,—գրում է նա,—ոսկեղեն պատնեշներ կկանգնեն և նոցա ետին կպատրսպարեն զինքեանս, իսկ խեղճ ժողովուրդը բաց հրապարակի վրա մնացած՝ տիրապետներու և խարեբաներու ոտից կոխան է դարձեր անխնա, զոհ է եղել քաղաքական ու կրոնական տզրուկներու։ Ահա այդ խեղճ ու անօգնական ժողովուրդին համար պետք է խոսիլ ու գրել, դորա իրավունքին պաշտպանությանը նվիրված եմք և մեք մեր գրիչը, այդ ժողովուրդին, որ ընդհանրապես աղքատ գործավորներե կբաղկանա։ Դոցա հետ է գլխավորապես, որ կուզեմք խոսիլ ամեն օր մեր թերթով»[3]։

«Ասիայի» էջերում ևս արտացոլվել է 1870-ական թվականների արևմտահայ դեմոկրատական մամուլի մի բնորոշ գիծը՝ գավառի հայ բնակչության սոցիալական և ազգային դրության լուսաբանումը։ Եթե 1860-ականին առաջադիմական պարբերականները հիմնականում բացահայտում էին Արևմտահայաստանի հայ գյուղացիության ծանր վիճակը՝ որպես հարստահարությունների ու տգիտության հետևանք, ապա խնդրո առարկա ժամանակաշրջանում մերկացումների անմիջական օբյեկտ են դառնում արևմտահայ սոցիալական վերնախավը և թուրքական պաշտոնեությունը։ Իր քննադատական նպատակաուղղվածության մեջ, հետևաբար, արևմտահայ առաջադիմական միտքը դիմում էր հասարակական որոշակիության՝ բացահայտելով հասարակական շարիքի կոնկրետ կրողներին։

«Ասիայի» խմբագիրը կրքոտ պայքար է մղել Եվդոկիայի, Վանի, Օրդուի, Ամասիայի չորսպաճի աղաների դեմ՝ միշտ հավատարիմ մնալով իր դավանանքին և պաշտպանելով հայ աշխատավորների տնտեսական ու հասարակական շահերը։ Եվդոկիայի հայերի հասարակական հակասություններին, խմբակցությունների ընդհարման մեջ «Ասիան» առանձնացնում և ցույց էր տալիս նաև դրանց սոցիալական նշանակությունն ու իմաստը։ Այս պարբերականի էջերում շատ արժեքավոր տեղեկություններ կարելի է գտնել Եվդոկիայի աղաների «կուսակցության», նրանց նպատակների ու գործելակեր-

---

1 Գ. Ա. Մադոյան, Կ. Պոլսի «Ասիա» թերթը (Պատմա-բանասիրական հանդես, 1975, № 5, էջ 103)։

2 Ասիա, 5, 8, 12, 19. XII. 1873։

3 Ասիա, 29. XII. 1874։

պի մասին։ Ինքը՝ Մ. Փորթուգալյանը, լավատեղյակ էր այդ իրականության։ «Ասիան» խմբագրելուց անմիջապես առաջ նա Եվդոկիայում գլխավորել էր տեղի դեմոկրատական ուժերի պայքարը ընդդեմ աղայական խմբակցության։ Շատ նյութերում «Ասիան» մերկացնում էր գավառական հարստահարիչների կամայականությունները, ապօրինի հարկերի գանձումը և այլն։ Թերթը սատարում էր գավառներում գործող լուսավորական-կրթական ընկերությունների գործունեությունը, ցուցաբերելով ոչ միայն համարձակություն, այլև գավառական կյանքի ու իրականության իրազեկություն։

Արժեքավոր է «Ասիայի» քննադատական վերաբերմունքը մայրաքաղաքի ազգային սահմանադրական մարմինների նկատմամբ։ Թերթը սուր քննադատության է ենթարկել վանեցի Պողոս վարդապետին և ցույց տվել նրա համագործակցությունը տեղական ջոջերի ու թուրքական իշխանությունների հետ։ Դրանով «Ասիան» շարունակում էր դեռևս 1860-ական թվականներին խորացված այն պայքարը, որ հարստահարիչ վարդապետի դեմ սկսել էին Հ. Սրվանձյանը և Մ. Նալբանդյանը «Մեղվի» էջերում։ «Ասիան» ուշագրավ պարզաբանումներ է մտցնում նրա անպատիժ մնալու խնդրում. մի հաղորդումից պարզ է դառնում, որ Պողոսին հովանավորում է Կ. Պոլսի բարձրաստիճան կղերը։ Այսպես, 1874 թ. օգոստոսի կեսին, անտեսելով այդ վարդապետի անձի տխրահռչակ համբավը, պատրիարքը նրա հետ պատարագել է Կ. Պոլսի մայր եկեղեցում։ Մ. Փորթուգալյանը այս կապակցությամբ հիշեցնում է պատրիարքին, որ դեռևս տասը տարի առաջ կրոնական ժողովը, որի ատենապետը այն ժամանակ ինքը՝ Ն. Վարժապետյանն էր, Պողոսին արգելել էր հոգևոր պաշտոն մատուցել՝ ի պատիժ նրա կատարած չարագործությունների[4]։

«Ասիայում» արտահայտվել է արևմտահայ դեմոկրատական մտքի մյուս դրսևորումը՝ գավառի հայ ազգաբնակչության նկատմամբ թուրքական պաշտոնյաների բռնությունների մերկացումը։ Թերթը վկայում էր այն իրողության մասին, որ իշխանությունները թշնամական վերաբերմունք ունեն հայ բնակչության հանդեպ, որ օրինական պաշտոնավարության փոխարեն նրանք հայերի հետ վարվում են իբրև գերիների ու նվաճվածների։ Թղթակցություններում ցույց է տրվում, որ իշխանություններին որևէ խնդրով բողոքելը իսկական պատուհաս էր դառնում Ամասիայի հայերի համար. կաշառակերությունը օրինականության աստիճանի բարձրացրած թուրք իշխանավորները իսկույն գործի էին դնում հայցվորին թալանելու իրենց հայտնի բոլոր միջոցները, անկախ այն բանից, թե որքանով է նա արդարացի։ «Հին ժամանակաց պես,—գրում է Թերթը,—բարբարոսություն երևան ելնելու վրա է։ Կառավարության դուռը գացող հայը կանարգեն և եթե երևելի պատվավոր մեկն է՝ կչանան նորա պատիվը կոտրելու և իրավունքը ոտնակոխ ընելու։[5]

«Ասիան» համարձակ մերկացումներ արեց նաև Բալուի թուրքական իշխանությունների բռնությունների առթիվ։ 1874 թ. հունիսին սրանք բանտարկել էին Բալուի առաջնորդին, որը համարձակվել էր բողոքի ձայն բարձրանել ի պաշտպանություն հարստահարվող ազգայինների։ Առաջնորդը բանտ էր նետվել առանց դատ ու դատաստանի։ Մասնավոր այս փաստի միջոցով Թերթը հասնում էր լուրջ ընդհանրացման, ցույց տալով, թե իրականում ինչ արժեք ունեն հայ ժողովրդին թուրքական իշխանությունների ցուցաբերած «վստահության» և իբր նրանց տրված լայն արտոնությունների մասին պաշտոնական դատարկ ձևակերպումները։ Թերթը ընթերցողին է հասցրել այդ բռնության դեմ ուղղված բողոք-հանրագիրը, ուր ասվում է, թե «տակավին մեր հայրենյաց մեջ որքան բռնություն և հալածմունք կգործվին... կրոնամոլ թուրքերեն. տերության ո՞ր կանոնով և օրինոք՝ ամբաստանելուն առանց բան մը հարցնելու և առանց երկու կողման բողոքները լսելու և ճշմարտության վերահասու ըլլալու, կբանտարկեն առաջնորդ մը»[6]։

---

4 Ասիա, 3. IX. 1874։

5 Ասիա, 13. IV. 1874։

6 Նույն տեղում։

Իշխանությունների համարձակ մերկացումներով «Ասիան» միանում էր Հ. Պարոնյանի «Մեղու» և Կ. Փանոսյանի «Մանզումեի էֆքյար» պարբերականների քննադատական դիրքորոշմանը։ Պետք է նկատել, որ թուրքական հարստահարությունների դեմ արևմտահայ դեմոկրատական մամուլի պրոպագանդը այս ժամանակաշրջանում մի հայտնի չափով ծավալվելու հնարավորություն էր ստանում գավառական հարստահարությունների դեմ պատրիարքի և Ազգային ժողովի բողոքի ձևակերպումներով (Մ. Խրիմյանի նախաձեռնած «Տեղեկագիր գավառական հարստահարությանցը») և բուն թուրքական կառավարող շրջանների մեջ լիբերալիզմի աշխուժացումով։ Հայտնի են այս ժամանակ արևմտահայ մյուս պարբերականների՝ իրենց համարձակությամբ նախադեպ չունեցող այնպիսի ելույթները, որով հայ հրապարակախոսությունը թափանցում էր թուրքական բյուրոկրատիայի այլասերված էության մեջ («Մեղու», «Մասիս», «Մանզումեի էֆքյար», «Օրագիր» և այլն)։

«Ասիան» պաշտպանել է պատրիարք Մ. Խրիմյանին՝ գավառահայերի իրավունքների պաշտպանությանն ուղղված նրա ջանքերի համար։ Մ. Փորթուգալյանը անխնա խարազանել է նրա հակառակորդ «Ղալաթիո օճախին» ու նրա առաջատար գործիչներին՝ Ք. Ղազարոսյանին, Ստ. Փափազյանին, Օ. Խոճասարյանին, Նար Պեյին և այլոց, ցույց տվել, որ «սահմանադրական օրինականության» հետ կապված նրանց առարկություններն ու պայքարը Խրիմյանի դեմ, նշանակում է ոտնահարել գավառահայության կենսական շահերը։ Այս իմաստով էլ թերթը պաշտպանել է սահմանադրության վերաքննության վերաբերյալ Խրիմյանի առաջարկները, սատարել նրան Օ. Խոճասարյանի և Գ. Այվազյանի «Օրագիր» և «Մամուլ» պարբերականների հարձակումներից։

«Ղալաթիո օճախի» անդամակիցների սուր քննադատությամբ «Ասիան» անվերապահորեն կանգնում էր Հ. Պարոնյանի «Մեղվի» կողքին։ 1870-ական թվականներին արևմտահայ դեմոկրատական մամուլը հետադիմության քննադատության մեջ դնում էր որոշակի իմաստ. մերժվում էր սովորական դարձած այն վերաբերմունքը, որով գավառը դիտվում էր իբրև հոգևոր առաջնորդների պաշտոնի ու եկամուտների աղբյուր և անտեսվում ժողովրդի հարստահարված և իրավազուրկ դրությունը։ Բացահայտվում էր նաև այն երևույթը, որ մայրաքաղաքում պաշտոններ վարող կղերի մի մասը չարաշահում է իր հոգևոր (և վարչական) իշխանությունը՝ հետամտելով քարոզչական տաքուկ պաշտոնների այս կամ այն եկեղեցում։ Այստեղից էր ծագում Մ. Խրիմյանի հակառակորդ եկեղեցականների քննադատությունը Հ. Պարոնյանի «Մեղու» և «Թատրոն» պարբերականներում։ Այստեղից էր սկսվում նաև Մ. Փորթուգալյանի կտրուկ ընդդիմությունը «Ղալաթիո օճախի» գործիչներին։

Արևմտահայ դեմոկրատիայի հասարակական տրամադրությունները վերհանելիս հայ հասարակական մտքի և հրապարակախոսության վերաբերյալ աշխատություններում հիմնականում մատնանշվում են Հ. Սրվաճյանի, Գր. Չիլինկիրյանի, Ատ. Ոսկանյանի, Կ. Փանոսյանի և Հ. Պարոնյանի պարբերականները։ Սակայն այս ցանկը ամբողջական չէր լինի, եթե անտեսվեր «Ասիայի» նշանակությունը, մի պարբերականի, որի արժեքավորումը առաջին անգամ տրվել է Մ. Փորթուգալյանի կենսագրությանը նվիրված էջերում[7]։ Իր առաջավոր հասարակական ուղեգծի շնորհիվ այդ թերթը արժանի է լուրջ ուշադրության, մանավանդ այն ժամանակահատվածում, երբ խմբագիրը Մ. Փորթուգալյանն էր (1873 թ. դեկտեմբերի 1-ից մինչև 1874 թ. հոկտեմբերի 21-ը՝ նրա հրատարակության դադարումը)։

«Ասիայի» էջերում առանձնապես նկատելի է ոչ միայն Հ. Պարոնյանի ու նրա «Մեղվի» նկատմամբ մշտապես դրսևորվող համակրանքը, այլև հասարակական միևնույն սկզբունքների միաժամանակյա պաշտպանությունը։ «Թիյաթրո» երգիծական թերթի հրատարակության առթիվ «Ասիան» համա-

7 Ա. Ալտոյանյան, Պատմություն Եվդոկիո հայոց, Կահիրե, 1952, էջ 1087.

ոոտ ուրվագծում է Հ. Պարոնյանի բարձր արվեստը երգիծանքի ժանրում և նրա մեծ «հաջողակությունը» ընթերցողների շրջանում։ Մ. Փորթուգալյանը բարձր գնահատական է տվել Հ. Պարոնյանի պարբերականների բովանդակությանը և հետամտած նպատակներին։ Նա վճռականորեն հակադրվում է երգիծական մամուլի նկատմամբ թուրքական գրաքննության հալածական քաղաքականությանը։ Եթե գրաքննությունը զավեշտաթերթի վրա հարձակվելիս մատնացույց էր անում ընդհանրապես երգիծանքի ժանրի հասարակական «վտանգավորությունը և բարոյական այլասերվածությունը», ապա Փորթուգալյանը, ինչպես և Հ. Պարոնյանը, հիմնավորում էր երգիծանքի հենց հասարակական անհրաժեշտությունը։ Նա ընդգծում էր, որ «ընտանեկան և ազգային կյանքին մեջեն հոռությունները բառնալու, ծանծաղմտությունը և ավանդամոլությունը հավասարապես հարվածելու համար ծաղրաթերթերուն պետքը խիստ զգալի է»[8]։

Մ. Փորթուգալյանը առանձնապես գնահատում էր ժողովրդական ուղղություն ունեցող և հասարակական արատները մերկացնող երգիծական պարբերականները։ Հ. Պարոնյանի «Թատրոնն» այս իմաստով գաղափարական մերձավոր առնչություններ ուներ «Ասիայի» հետ։ Դրանց մեջ առավել աչքի են զարնում սուր հակադրությունները Ազգային վարչության լիբերալ գործիչների, ինչպես և հետադիմական կրոնական ժողովի հետ։ Ուշագրավ է, որ Մ. Խրիմյանի հեռանալուց հետո և՛ «Թատրոնը», և՛ «Ասիան» քննադատեցին պատրիարք Ներսեսին՝ «Ղալաթիո օճախի» մարդկանց (Խրիմյանի հակառակորդների) կողմը հակվելու համար, որը կաշկանդում էր պատրիարքարանի գործողության ազատությունը։ «Ասիան» առարկում էր պատրիարքին՝ վանեցի Պողոսին և նրա խմբակցությանը զիջումներ անելու համար, մի վերաբերմունք, որ նկատելի է նաև «Թատրոնում», որը և հանդես էր գալիս Խ. Նար Պեյի, Պողոսի, Ամբրոսիոս վարդապետի ու նրանց աշխարհիկ հովանավորների դեմ։ «Մեղուն», ինչպես և «Թատրոնը» քանիցս խափանվել են սրանց դեմ ուղղված համարձակ քննադատության համար։ Ազգային վարչությունը գործի էր դնում իր բոլոր հնարավորությունները՝ լռեցնելու «Թատրոնը» և «Ասիան»։ 1874 թ. հուլիսին դեմոկրատական մամուլի դեմ քաղաքական ժողովը հանդես եկավ պաշտոնական հայտարարությամբ, որով փորձում էր հիմնավորել յուրատեսակ ազգային գրաքննության անհրաժեշտությունը՝ օսմանյանին զուգահեռ[9]։ Հայտարարության մեջ դատապարտվում են այն թերթերը, որոնք «թշնամական և անարգական» կերպով են խոսում երեսփոխանական ժողովի և երեսփոխանների դեմ։ Քաղաքական ժողովի ատենապետ Սիմոն Մաքսուտը բացահայտորեն արտահայտվում էր մամուլը զսպելու օգտին։ Ի պատասխան դրան, «Ասիան» նկատում էր, որ հայտարարության հեղինակները ցանկանում են մամուլը զրկել քննադատության իրավունքից։ Նշված հայտարարությունը Մ. Փորթուգալյանի կարծիքով հիշեցնում էր 1867 թ. փետրվարի 12-ի «ժամանակավոր որոշումը», որի ուժով թուրքական իշխանությունները մամուլի վրա դրել էին քաղաքական ճնշման լուծը[10]։

«Ասիան» պաշտպանել է Հ. Պարոնյանին՝ Գ. Այվազյանի հետ նրա վարած բանավեճի ժամանակ։ Մ. Փորթուգալյանը ևս Գ. Այվազյանին ներկայացնում է իբրև մի խմբագրի, որը հոդվածները գրել է տալիս ուրիշներին և ստորագրում իբրև հեղինակ։ Դիտողությունը, որ ի դեպ, հետագայում կրկնում էր նաև Ա. Արփիարյանը, մեր կարծիքով, թելադրված է զուտ բանավիճային կրքով։ Գ. Այվազյանը իր հանդեսը տպագրել և խմբագրել է 1869—1882 թթ. և այս երկար ժամանակամիջոցում գրել տալ միշտ ուրիշներին և ներկայանալ իբրև անփոփոխ հեղինակ՝ նա չէր կարող։ Կարծում ենք, որ

---

8 Ասիա, 7. X. 1874։

9 Ասիա, 31. VII. 1874։

10 А. Д. Желтяков, Печать в общественно-политической и культурной жизни Турции. М., 1972, с. 93.

խոսքը կարող է վերաբերել նրա հեղինակած նյութերի խմբագրմանը և ոչ ավելիին։

«Թատրոնի» և «Ասիայի» համագործակցությունը առավել նկատելի է հայ եկեղեցու բարենորոգման, մտավորականության ջանքերով նրա թերությունները վերացնելու ջանքերի մեջ։ Անդրադառնալով այդ համագործակցությանը, Ա. Ալպոյաճյանը նշում է. «Իրեն (Մ. Փորթուգալյանի—Ա. Խ.) հետ այս պայքարին մեջ համաձայն էր Հակոբ Պարոնյան՝ իր «Թատրոնով»[11]։

Դիտողությունը միանգամայն ճշմարիտ է, սակայն հարցը չի սպառվում սոսկ համեմատությամբ։ Իր համագործակցությանը Հ. Պարոնյանը տվել է անհիշական բնույթ՝ աշխատակցելով Մ. Փորթուգալյանի թերթին։ «Ասիայում» տպագրված նրա թղթակցությունները, որքան մեղ հայտնի է, մնացել են անհայտության մեջ և դուրս են մնացել երգիծաբանի երկերի ժողովածուներից։ «Ասիայում» նա տպագրել է յոթ հոդված[12], բոլորն էլ միևնույն թեմայով և վերաբերում են Ամբրոսիոս վարդ. Իսկենդերյանի բարոյական վարքագծին և այս առթիվ՝ ազգային մարմինների վերաբերմունքին։ Առաջին հոդվածը կրում է «Թատրոնին երբեմն հուշարարը» («Ասիայի» 1874 թ. հուլիսի 22-ի և 24-ի համարներում) ստորագրությունը, իսկ մյուսները՝ «Հուշարար», որ «Թատրոնում» հանդիպող՝ Հ. Պարոնյանի լավ հայտնի ծածկանուններից է։ Չնայած իրենց թեմատիկ միօրինակությանը, Պարոնյանի այս հոդվածները լուրջ ուշադրության են արժանի իրենց քննադատական ոգու, ինչպես և այն տեսակետից, որ կոնկրետություն են մտցնում ժամանակի կրոնական ու քաղաքական ժողովների դեմ մեծ երգիծաբանի ծավալած պայքարի հետևողականության վերաբերյալ մեր պատկերացումների մեջ։

«Ասիայում» Պարոնյանի շարունակական ելույթների պատճառը Ամբրոսիոսի գայթակղիչ սիրային կապերն էին։ Գործը հասել էր Բերայի ոստիկանական ատյանին և սպառնում էր ստվեր նետել կղերի հեղինակության վրա։ Այս զատին Պարոնյանը անդրադարձել էր դեռևս «Մեղվում»՝ 1874 թ. փետրվար-մարտին։ Հակառակ «Օրագրի», «Մասիսի» և «Հայրենիքի», որոնք կոծկել էին ճշմարտությունը և հայտնել, թե ոստիկանության ատյանը դատը վճռել է Ամբրոսիոսի օգտին, Հ. Պարոնյանը նշում էր, որ պատրիարքարանը ստացել է պաշտոնական գրություն, որ վարդապետի համար «անպատավոր կերպարանք մը չունի և խնդիրը դարձյալ պատրիարքարանի քննության կհանձնե»[13]։ Այս խնդրի կապակցությամբ Հ. Պարոնյանը հոդվածներ է տպագրել «Թատրոնի» 1874 թ. մայիսի 1-ի և 25-ի համարներում, նույն՝ «Հուշարար» ստորագրությամբ։ Պարոնյանը քննադատում է կրոնական ժողովին այն բանի համար, որ կասկածելի համբավի տեր մեկին նշանակել է Բերայի ս. Հարություն եկեղեցու քարոզիչ՝ հասարակայնությունից թաքցնելով պատրիարքարանին ուղղված դատական գրությունը։

Իր առաջին հոդվածում, որ վերնագրված է «Խառն ժողովին պաշտոնական ծանուցումը և Ամբրոսիոս վարդապետ», Պարոնյանը շարունակում է «Թատրոնում» հայտնած իր դիտողությունները. խնդիրը դեռևս պարզված չէ, մինչդեռ «Ղալաթիո օճախի» կուսակիցները Ամբրոսիոսին նախ տվել են Բերայի, այնուհետև՝ Ղալաթիայի եկեղեցիների քարոզչի պաշտոնները և ընտրել կրոնական ժողովի անդամ։

Դրանից հետո կրոնական ժողովը հրապարակախոսի վրա ուժեղ ճնշում է գործադրել, սակայն նա որոշել էր գնալ մինչև վերջ։ «Ասիայում» տպագրած հաջորդ հոդվածում՝ «Ոստիկանության պատժական ատենին որոշումը և Ամբրոսիոս վարդապետ» վերնագրով, նա հայտնում է իր դեմ սկսված հարձակումների մասին։ Համառոտ խոսքով ներկայացվում է ճշմարտության համար մարտնչող հրապարակախոսի դժվարին կացությունը։ «Ամբրոսիոսի պաշտպանները,—գրում է նա,—մեր նախորդ հոդվածին վրա սաստիկ զայրացեր են. ասիկա զարմանալի չէ սակայն։ Ամեն անգամ, որ ճշմարտություն պաշտ-

11 Ա. Ալպոյաճյան, նշվ. աշխ., էջ 1088։

12 Ասիա, 22. VII., 24. VII., 1. VIII., 2. IX., 24. IX., 25. IX., 30. IX., 20. X. 1874։

13 Մեղու, 6. II. 1874։

պանելու կելնենք հրապարակի վրա, պետք է միանգամայն մեր անձն ալ պաշտպանելու պատրաստվինք անխորհուրդ հարձակումներու և անիրավ չարախոսություններու դեմ»[14]։ Հոդվածում «Հուշարարը» զեեեղել է դատավճռի թուրքերեն բնագիրը և դրա հայերեն թարգմանությունը։ Ակներև է, որ Բերայի ոստիկանության պատժական ատյանը տեղի էր տվել վարդապետի ազդեցիկ հովանավորներին և կարճել էր գործը, մանավանդ որ թուրքական իշխանությունները թանզիմաթի բարեփոխումներից հետո ևս շարունակում էին ճանաչել եկեղեցականին դատելու՝ արևմտահայ կրոնական մարմինների իրավասությունը։ Հրապարակախոսը, մինչդեռ, հարցը առկախ է համարում և խառն ժողովից պահանջում է վերաքննել վարդապետի հարցը։

Իր մյուս հոդվածում «Հուշարարը» մերկացնում է քաղաքական ժողովի անդամներից մեկին, որն այցելել էր Բերայի մյութեսարրֆին և բարեխոսել Ամբրոսիոսի օգտին։ Հոդվածում որևէ ուղղակի խոսք չի ասվում թուրքական պաշտոնեության հասցեին, սակայն քաղաքական ժողովին ուղղված նրա մերկացումները տարածվում են նաև իշխանությունների վրա, իբրև ճշմարտությունը խեղաթյուրող կողմի։

Իր հետագա ելույթներում «Հուշարարը» քննադատության է ենթարկել կրոնական ժողովի անդամներին՝ վարդապետի հանդեպ կողմնակալ վերաբերմունքի համար։ Հրապարակախոսը լայն ընդհանրացումներ է անում կղերի արժանապատվության, նրա բարոյական նկարագրի, հասարակական ազդեցության և դրան առնչվող խնդիրների շուրջ, որոնք արդեն գագարում են զուտ մեկ անձի վերաբերելուց և ստանում են սուր հնչեղություն։ Այսպես, «Հուշարարի» վերջին հոդվածից պարզվում է, որ դեռևս «Թատրոնի» մեջ Ամբրոսիոսի դեմ տպագրած նյութերի համար այդ վարդապետը դատ էր բացել Պարոնյանի դեմ։ «Ասիայի» էջերում «Հուշարարի» փաստացի մերկացումներից հետո, ինչպես երևում է, Ամբրոսիոսը խոհեմաբար ընթացք չի տվել գործին, սակայն խառն ժողովի իր հովանավորների միջամտությունից և իրեն անմեղ ճանաչելու մասին այդ ժողովի հայտարարությունից հետո նա դարձյալ անիրավվածի կեցվածք է ընդունել և սպառնացել նորոգելու դատը։ «Շատ ուրախ եմ,—գրում է «Հուշարարը»,—որ իմ փափաքս պիտի լեցվի վերջապես, ղի քննությունն պահանջելն բնավ դադրած չեմ, ամեն ատեն պատրաստ կեցած եմ ուր որ ալ ըլլա՝ դատվելու և վճռագրույն մեջ հրատարակված պարագաներուն հենլով՝ ապացուցանելու, թե «Թատրոնի» և թե «Ասիո» մեջ հրատարակած հոդվածներուս մինչև հետին նշանախեցը»[15]։

Առհասարակ «Ասիայում» «Հուշարարի» հոդվածները կղերի թերությունների հանդեպ հեղինակի վերաբերմունքը ամրողջացնելուց բացի, նպաստում են պարզելու նաև նրա որոշ կենսագրական հանգամանքները։ Տպագրելով «Հուշարարի» հոդվածները, Մ. Փորթուգալյանը լիուլի բաժանել է Հ. Պարոնյանի դժվարին կացությունը։ Հարկ է հիշեցնել, որ 1864 թ. դեկտեմբերի օսմանյան մամուլի օրենքի 7-րդ հոդվածով պարբերականի խմբագիրը կամ տնօրենը պատասխանատու էր տպագրած բոլոր նյութերի համար։ Այն ենթադրում էր, որ անկախ դատապարտելի նյութի հեղինակի ինքնությունից, պարբերականի խմբագիրը (տնօրենը) «այն հոդվածին հեղինակին կամ հեղինակներուն հետ իբրև մեղսակից պիտի դատվի»[16]։

Ամբրոսիոսի կողմից Հ. Պարոնյանի դեմ դատ բանալու փաստը լույս է սփռում «Ասիայում» «Հուշարարի» հանգեսս գալու պատճառների վրա։ Նախ, «Ասիան» էր այն միակ հրատարակությունը, որը գաղափարական ու գործնական կապեր ուներ «Թատրոնի» հետ և լիովին պաշտպանում էր նրա ընթացքը։ Երկրորդ, «Թատրոնից» բացի մի այլ պարբերականում վարդապետի մերկացումը հավելյալ փաստերով էր հիմնավորելու «Հուշարարի» քննադատական ելույթները կրոնական ժողովի և նրա հովանավորյալի նկատ-

14 Ասիա, 1. VIII. 1874։
15 Ասիա, 20. X. 1874։
16 Մասիս, 19. XII. 1864։

մամբ։ Այս հանդամանքները իրենց կնիքն են դրել «Ասիայում» «Հուշարարի» հոդվածների ոճի վրա։ Առհասարակ, բացառիկ դեպքերում է միայն, որ Պարոնյանը խուսափում է երգիծանքի հնարներից և դիմում հրապարակախոսական ուղղակի խոսքի։ «Ասիայում» տպագրած խնդրո առարկա հոդվածները չունեն երգիծական-գեղարվեստական տարրեր և կառուցված են զուտ փաստերի ու տրամաբանական եզրակացությունների վրա։ Տվյալ դեպքում երգիծական ոճի երկիմաստությունը նպատակահարմար չէր կարող լինել գործնական պայքարի մեջ մտած Պարոնյանի և Փորթուգալյանի համար։ Չպետք է մոռանալ, որ երգիծաբանի աշխարհիկ ու կղերական թշնամիները միջոցների մեջ երբևէ ընտրություն չեն դրել «Թատրոնը» (և ընդհանրապես, Պարոնյանի խմբագրած բոլոր պարբերականները) խափանելու համար և այս հարցում միշտ գտել են իշխանությունների պատրաստակամ աջակցությունը։

Կարծում ենք, շփոթության չպետք է մատնի այն հանգամանքը, որ «Հուշարարը» երբեմն դիմում է Պարոնյանին՝ ինչպես «մեր մտերիմ ու խելացի բարեկամը՝ Պարոնյան էֆենտին» կամ «Ամբրոսիոսը դատ բացած էր Պարոնյան էֆենտիի դեմ» և այլն[17]։ Խնդիրն այն է, որ Պարոնյանը անձնավորել է իր ծածկանունը և այն դարձրել պերսոնաժ, որը իբրև ինքնուրույն անձ, կարող էր դիմել ցանկացած մեկին, այդ թվում և իրեն՝ Պարոնյանին։ Այսպես, մի տեղ նա հայտնում է ընթերցողներին. «Թատրոնը», ինչպես որ կտեսնեն իր ընթերցողներն, այսօրվան օրս բավական խմբագիրներ ունի, որոնք «Հուշարար», «Բելիար», «Խիկար», «Ծև», «Դուն», «Հեփեստոս» և այլ ստորագրություններով «Թատրոնին» զարդը եղած են»[18]։ Այսպիսի գրելաձևը բավական տարածված էր ժամանակի լրագրության մեջ (Մ. Նալբանդյանի Կոմս էմմանուելը, Հ. Սրվանձյանի Մեչուխեչան, Մ. Մամուրյանի Շահնուրը և այլն)։

Ամբրոսիոսի և կրոնական ժողովի սկզբունքային մերկացումները, որտեղ «Ասիան» և «Թատրոնը» չվարանեցին ազգային քինախնդիր գործիչների և անգամ պատրիարքի քննադատությունից, չէր կարող մնալ առանց հետևանքի։ Համարձակ խոսքին նրանք այլ բան չէին կարող հակադրել, բացի կտրուկ գործողություններից։ 1874 թ. հոկտեմբերի 21-ին երկու պարբերականներն էլ դադարեցվեցին տպագրական տեսչության կողմից. «Ասիան»՝ ընդմիշտ, իսկ «Թատրոնը»՝ երկու ամսով։ Տպագրական տեսչության ազդում հայտնվում էր, որ «Ասիան» դադարեցվում է պատրիարքարանի դեմ վնասակար լուրեր տպագրելու պատճառով։ Հաջորդ օրը՝ հոկտեմբերի 22-ին Մ. Փորթուգալյանը հանդես եկավ առանձին հավելվածով[19], որտեղ սուր քննադատության ենթարկեց պատրիարքին և ազգային հետադիմությանը՝ իր թերթի հետ հաշվեհարդար տեսնելու համար։ Հավելվածից պարզվում է, որ պատրիարքը իշխանությունների առջև «Ասիան» ներկայացրել է իբրև ժողովրդին պատրիարքարանի դեմ գրգռող հրատարակություն։ Մ. Փորթուգալյանը նկատում է, որ Սիմոն Մաքսուտը ևս «մի քանի անգամ մեծ. եպարգոսին ներկայացեր և թախանձով աղաչեր է «Ասիան» ժամ առաջ դադրեցնելու համար»[20]։ Ինչ վերաբերում է «Թատրոնին», ապա դրա խափանման կոնկրետ առիթը եղել էր Ազգային ժողովում Հ. Տատյանի վարքագծի համարձակ քննադատությունը (Հ. Պարոնյանի «Սահմանադրության մեջ ազնվապետություն», «Շնորհ և իրավունք» հոդվածները)[21]։ Ի դեպ, ազգային ջոջերի

---

17 Ասիա, 22. VII. 1874, 20. X. 1874։

18 Հ. Պարոնյան, Երկերի ժողովածու, հ. 9, Երևան, 1975, էջ 184։

19 1864 թ. դեկտեմբերի լրագրական օրենքով չէին կարգավորվել հավելվածների հրատարակության կանոնները, ուստի, դրանից օգտվելով, խմբագիրները կարողանում էին տպագրել նաև խափանված համարի հավելվածը, որը հնարավորություն էր տալիս հայտնել խափանման պատճառների մասին։

20 Ասիա, 22. X. 1874։ Հավելվածը։

21 Թատրոն, 10. X. 1874, 14. X. 1874։

կամայականությունների դեմ ուղղված «Թատրոնի» այս հրապարակումները պաշտպանվեցին «Ասիայի» էջերում[22]։

Դեմոկրատական պարբերականների խոփանումը անբավականության արձագանք գտավ հայ առաջավոր մտավորականության շրջանում։ Խնդիրը միանգամայն սպառիչ կերպով բնութագրեց Բաֆֆին. «Կրոնական ժողովի նախազգուշությունը,—գրում է նա,—որ դարձած էր Կ. Պոլսի լրագրությանը, որ նրանք եկեղեցականների վերաբերյալ սեղեկության մեջ համեստություն պահպանեն, նրանց անձնականությանը չդպչեն և այլն, այդ հռոմեական կուժը խեղճ «Ասիայի» գլխին կոտրվեցավ. լրագիրը դադրեցավ յուր գործունեությունից։ Կրոնական ժողովը փոխանակ լրագրության ձայնը լռեցնելու, ավելի լավ կաներ՝ հոգևորականներին ուղղեր»[23]։

Վերը ասվածը թույլ է տալիս եզրակացնելու, որ «Ասիա» թերթը լրացրել է դեմոկրատական հրատարակությունների շարքը՝ պաշտպանելով «Մեղվի» և «Թատրոնի» հասարակական և գաղափարական ուղեգիծը։ Այս իմաստով «Ասիան» կարևոր արժեք է ստանում 1870-ական թվականներին՝ Մ. Փորթուգալյանի ազգային ու հասարակական գործունեության և հայացքների ուսումնասիրության տեսակետից։ Կ. Պոլսի ազգային մարմինների և մասնավորապես եկեղեցականության ոչ արժանավոր ներկայացուցիչների հանդեպ իր քննադատական վերաբերմունքով «Ասիան» համագործակցել է «Թատրոնի» խմբագրի հետ։ «Ասիայում» են տպագրվել Հ. Պարոնյանի մինչև օրս անհայտ մնացած՝ թվով յոթ թղթակցությունները՝ «Թատրոնին երբեմն հուշարարը» և «Հուշարար» ստորագրություններով։

СОТРУДНИЧЕСТВО АКОПА ПАРОНЯНА В ГАЗЕТЕ «АСИЯ»

А. А. ХАРАТЯН

Резюме

Константинопольская армянская газета «Асия» в период редакторства М. Португаляна (1 декабря 1873—21 октября 1874) придерживалась демократического направления. Идеологически она была созвучна газетам «Мегу» и «Татрон», издававшимся крупнейшим армянским сатириком А. Пароняном. Эти связи стали более действенными, когда на страницах «Асия» было опубликовано семь статей А. Пароняна (с псевдонимами «Татронин ербемн ушарар» и «Ушарар»), которые по сегодняшний день оставались неизвестными исследователям и не вошли в собрания сочинений писателя.

COLABORATION OF HACOB PARONIAN IN THE NEWSPAPER "ASIA"

A. A. KHARATIAN

Summary

The Armenian newpaper "ASIA" in Constantinople at the period of editorship by A. Portugalian (1 Dec. 1873—21 Oct. 1874) was keeping to the democratic trend. Ideologically it was consonant with papers „MEGHU" and "TATRON" published by a major Armenian satirical writer A. Paronian.

These links became more efficient when published on the pages of "ASIA" there appeared seven articles by A. Paronian (under the pen names of "TATRONI ERBEMN USHARAR" and "USHARAR"), which to date have been unknown to scholars and have not been included into the author's selected works.

22 Ասիա, 20. X. 1874։

23 Մշակ, 16. I. 1875։